ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0010, ք.Երևան, Կորյունի 15/1, Հեռ: (00 37410) 511-773

№ ԴԴ -3-Ե- 1830

«09» մարտի 2022թ.

ՖՈՏՈՆ ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ն. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ
ՄԵԳԱՕՖԻՍ ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ն. ԱՅԴԻՆՅԱՆԻՆ
ՄԵՐԿԱԴՈ ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Տ. ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Սույնով ծանուցվում է, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/05» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտերում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ հետևյալ անհամապատասխանությունները.

Ֆոտոն ՍՊԸ

-ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում (Հավելված 1.2) «4.3. Անձի հաշվառման հասցեն» ենթաբաժնի «4.3.3. Վարչատարածքային միավորը», ինչպես նաև «4.4. Անձի բնակության հասցեն» ենթաբաժնի «4.4.3. Վարչատարածքային միավորը» դաշտերը լրացված չեն:

Մեգաօֆիս ՍՊԸ

-ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունում (Հավելված 1) գործունեության հասցեն լրացված է ոչ ամբողջական.

-ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի (Հավելված N 1.2) «1.3. Հայտարարագրի ներկայացումը» ենթաբաժնի «1.3.1. Հայտարարագրի ստորագրման օրը, ամիսը, տարին» դաշտում տարին սխալ է լրացված:

Մերկադո ՍՊԸ

-ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում (Հավելված 1.2) «4.2. Անձը հաստատող փաստաթուղթը» ենթաբաժնի «4.2.2. Փաստաթղթի համարը» դաշտում լրացված թվանշանների քանակը գերազանցում է ՀՀ Կառավարության 1998թ. դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշմամբ անձնագրերի համարակալման համար նախատեսված թվանշանների քանակին:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/05» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11 կետը՝ առաջարկվում է մինչև սույն թվականի **մարտի 10-ը ներառյալ** eauction.armeps.am համակարգի միջոցով շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնվում է, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում Ձեր հայտերը կգնահատվեն անբավարար և կմերժվեն, ինչպես նաև Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Ձեր տվյալները՝ համապատասխան հիմքերով, կուղարվեն լիազորված մարմին՝ Ձեզ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու համար:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ **ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/05» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Ա. Խաչատրյան
Հեռ.՝ /+37410/ 511-787, 511-788